# Saint Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
**Registered charity No.** 1173403


**Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan**
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
*Pastoral office* t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche


**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL**

**1: Today's Scripture Reading, 19th April 2026 Bulletin 20/2026**


## GREEN SUNDAY-ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ

## ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՀՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ 2:1-10

**ԿԵՆԴԱՆԻ ՎԷՄԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԱԶԳԸ**

Ուրեմն մէկդի՛ ձգելով ամէն չարութիւն ու ամէն խաբէութիւն ու կեղծաւորութիւն եւ նախանձ ու ամէն չարախօսութիւն՝ Նորածին մանուկներու պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք [մինչեւ փրկութիւն], Քանզի Տէրոջը քաղցր ըլլալուն համը առիք: Մօտեցէ՛ք անոր, այն կենդանի Վէմին որ թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծմէն ընտրուած ու պատուական է, Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստոսին ձեռքով Աստուծոյ հաճելի հոգեւոր պատարագներ մատուցանելու: Որովհետեւ գրքին մէջ ալ կայ. «Ահա՛ Սիօնի մէջ ընտիր, պատուական անկիւնի վէմ մը կը դնեմ եւ ով որ անոր հաւատայ՝ բնաւ պիտի չամչնայ»: Ուստի ձեզի հաւատացեալներուդ պատուական է ան, բայց անհաւատներուն՝ «Այն քարը որ շինողները անարգեցին՝ անիկա անկիւնին գլուխը եղաւ Եւ գլորման վէմ ու գայթակղութեան քար անոնց՝ որ խօսքին չհաւատալով կը գայթակղին», որուն սահմանուած ալ էին: Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ մը, որպէս զի հռչակէք անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց. Որ ատեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք:

## The Epistle of First Peter 2:1-10

So get rid of all evil behaviour. Be done with all deceit, hypocrisy, jealousy, and all unkind speech. Like newborn babies, you must crave pure spiritual milk so that you will grow into a full experience of salvation. Cry out for this nourishment, now that you have had a taste of the Lord's kindness.

**Living Stones for God's House**

You are coming to Christ, who is the living cornerstone of God's temple. He was rejected by people, but he was chosen by God for great honor.

And you are living stones that God is building into his spiritual temple. What's more, you are his holy priests.*a* Through the mediation of Jesus Christ, you offer spiritual sacrifices that please God. As the Scriptures say,

> "I am placing a cornerstone in Jerusalem,*b* chosen for great honor, and anyone who trusts in him will never be disgraced."*c*

Yes, you who trust him recognize the honor God has given him.*d* But for those who reject him, "The stone that the builders rejected has now become the cornerstone."*e* And, "He is the stone that makes people stumble, the rock that makes them fall."*f* They stumble because they do not obey God's word, and so they meet the fate that was planned for them.

But you are not like that, for you are a chosen people. You are royal priests,*g* a holy nation, God's very own possession. As a result, you can show others the goodness of God, for he called you out of the darkness into his wonderful light.

**Our Aim;**

**St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.**

"Once you had no identity as a people; now you are God's people.
Once you received no mercy; now you have received God's mercy."*h*

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 2:23-3:12

**Յիսուսի առաջին Զատիկը Երուսաղէմի մէջ**

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ մարդոց սիրտին մէջ:

**Յիսուս եւ Նիկոդեմոս**

իկոդեմոսանունով Փարիսեցիմարդմըկար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր.

Վարդապե՛տ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ ղրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ:

Յիսուս պատասխանեց անոր.

– Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը:
Նիկոդեմոս հարցուց անոր.
– Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի:
Յիսուս պատասխանեց.
– Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, 6որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ զարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք: Հովը ո՛ւր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին:
Նիկոդեմոս հարցուց.
– Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա:
Յիսուս պատասխանեց.
– Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Լաւ գիտցիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի՝ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ:

## The Holy Gospel of Jesus Christ according to John 2:23-3:12

Now when he was in Jerusalem at the Passover, during the feast, many believed in his name, observing his signs which he did. But Jesus didn't trust himself to them, because he knew everyone, and because he didn't need for anyone to testify concerning man; for he himself knew what was in man.

Now there was a man of the Pharisees named Nicodemus, a ruler of the Jews. The same came to him by night, and said to him, "Rabbi, we know that you are a teacher come from God, for no one can do these signs that you do, unless God is with him."

Jesus answered him, "Most certainly, I tell you, unless one is born anew, * he can't see God's Kingdom."

Nicodemus said to him, "How can a man be born when he is old? Can he enter a second time into his mother's womb, and be born?"

Jesus answered, "Most certainly I tell you, unless one is born of water and spirit, he can't enter into God's Kingdom! That which is born of the flesh is flesh. That which is born of the Spirit is spirit. Don't marvel that I said to you, 'You must be born anew.' The wind * blows where it wants

**Dear Parishioners and Armenian Community Members**:
The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for <u>all</u> to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your <u>time and financial contribution</u> to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

to, and you hear its sound, but don't know where it comes from and where it is going. So is everyone who is born of the Spirit."

Nicodemus answered him, "How can these things be?"

Jesus answered him, "Are you the teacher of Israel, and don't understand these things? Most certainly I tell you, we speak that which we know, and testify of that which we have seen, and you don't receive our witness. If I told you earthly things and you don't believe; how will you believe if I tell you heavenly things?

## ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ (ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ)

Հիսուս Քրիստոսի Հարության՝ Ս. Զատկին հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կիրակի՝ ի հիշատակ Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Այս եկեղեցին համարվում է Սիոնի վերնատունը, որտեղ Հիսուս Քրիստոս հաստատեց Սուրբ Հաղորդության խորհուրդը: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաև Կանաչ կիրակի, որն ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ տոնի ժողովրդական անվանումն է, կապված բնության, զարնանային զարթոնքի հետ:

## SUNDAY OF THE WORLD CHURCH (GREEN SUNDAY)

The second Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is the Sunday of the World Church. It commemorates the first Church of Jerusalem, established by Christ.



On the first day of the Jewish festival of Passover, Jesus instructs two of the Apostles, Peter and John, to go into Jerusalem and meet a man, who would direct them to a house where Christ and His Apostles could celebrate the Passover Feast. Peter and John are led to the "Upper Room" of a house, where they make the necessary preparations for the meal. Later that evening Christ and the Twelve Apostles sit together to eat supper.

Christ speaks to them and says, "I have desired to eat this Passover with you before I suffer: For I say unto you, I will not any more eat thereof, until it be fulfilled in the Kingdom of God. And He took the cup, and gave thanks, and said, "Take this, and divide it among yourselves: For I say unto you, I will not drink of the fruit of the vine, until the kingdom of God shall come." And he took bread, and gave thanks, and broke it, and gave unto them, saying, "This is my body which is given for you: this do in remembrance of me." Likewise also the cup after supper, saying, "This cup is the new testament in my blood, which is shed for you." (Lk 22:15-20)

This "Last Supper" was the event where Jesus Christ established the Sacrament of Holy Communion, which we celebrate every Sunday during the Divine Liturgy in Armenian Churches throughout the world. The Upper Room in Jerusalem is considered to be the first Church, as founded by Christ.

The Sunday of the World Church is also called "Green" Sunday, which according to Archbishop Malachia Ormanian, is the popular name of the feast and is linked with the awakening of nature in the springtime.

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

## 3: This week's message from our Priest in Charge

## Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

*«Իսկ եթէ ուշանամ, դու կիմանաս, թէ ինչպէս պէտք է վարուես Աստծոյ տան մէջ, որ կենդանի Աստծոյ եկեղեցին է՝ սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան»* (Ա. Տիմ. 3:14-16)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Քրիստոսի Յարութեամբ զօրացած եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,
Յարութեան ուրախութեան տօնական շրջանի մէջ ենք: Մինչ Զատիկ եօթշաբաթեայ պահեցողութեան դիմաց այժմ յիսուն օր շարունակ ամէն օրը որպէս «կիւրակէ" կամ «տէրունական օր" է: Ինչպես Մեծ Պահքի ամեն կիրակի իր անունով մեզ խոկման ուղղորդում էր դառնում, այնպես էլ Սուրբ Յարութեան ցնծութեան այս եօթշաբաթեայ շրջանը, որ Յինունք անունով է յայտնի, իր ամէն կիրակիի անուանումով էլ մեր միտքը բեւեռուած է պահում Քրիստոսի Յարութեանը եւ աշխարհի ու մեր կեանքում նրա բերած բարի պտուղներին:

Յարութեան զատկական կիրակին իր շարունակութիւնն է ունենում տարուայ բոլոր կիրակիների մէջ՝ իբրեւ Քրիստոսի յարութեան եւ Աստծուն նուիրուած սուրբ օր: Այս շարունակականութիւնը յատկապէս երեւում Զատկին յաջորդող կիրակիի անուան մէջ՝ Կրկնազատիկ կամ Նոր Կիրակի, որ խորհրդանշում է արարչութեան նորոգումը Քրիստոսով, քրիստոնէական նոր դարաշրջանի սկիզբը:

Այս երրորդ կիրակին կոչւում է Աշխարհամատրան կիրակի, որ նշանակում է մատուռ կամ եկեղեցի բոլոր քրիստոնեաների համար, քանի որ վերնատունը առաքեալների կողմից հաստատուած քրիստոնէական առաջին եկեղեցին դարձաւ: Ինչպէս փակ դռներով վերնատանը ծածկապէս հաւաքուող առաքեալները Յարութիւնից յետոյ համարձակ քարոզեցին, տարածեցին Քրիստոսի Աւետարանը ամբողջ աշխարհով մէկ, նոյն կերպ վերնատան առաջին մատուռ-եկեղեցին ընդարձակուեց, կարծես իր հոգեւոր ճիւղերը տարածեց բոլոր ժողովուրդների մէջ՝ դառնալով քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցու փարթամ ծառի հիմք: Այս է պատճառը, որ Աշխարհամատուռ կոչելուց բացի այս օրը նաեւ Կանաչ կիրակի է անուանուել՝ խորհրդանշելով հոգեւորաբար վերընձիւղուած , կանաչած եւ ծաղկած Եկեղեցին: Այս տրամաբանութեամբ է, որ այսօրուայ աւետարանական ընթերցումների մէջ խօսւում է Քրիստոսի կողմից առաքեալներ ընտրելու մասին: Կարեւոր է նաեւ Քրիստոսի հարցումի պատասխանը, թէ առաքեալներն ի՞նչ են մտածում Իր մասին, Ո՞վ է Ինքը, քանի որ պատասխանը բարձրաձայնուած հաւատն է, դաւանութիւնը, որի վրայ մեր հոգեւոր ամբողջ կեանքի շէնքն է կանգնում: Եւ երբ բոլոր առաքեալների անունից Պետրոս դաւանում է Յիսուսին իբրեւ Քրիստոս՝ կենդանի Աստծոյ Որդի, այդ դաւանութիւնն ու դաւանողին է Յիսուս վէմ կոչում, որի վրա է շինուած Իր Եկեղեցին, որին դժոխքի դռները չպիտի յաթահարեն (Տե՛ս Մատթ. 16:16-18):

Եկեղեցին, որին Պօղոսն անուանում է *«սիւն եւ հաստատութեան ճշմարտութեան»*, «Քրիստոսի խորհրդական մարմին», որ կենդանի է, իր ապրող ու վկայող անդամներով՝ աճող եւ տարածուող: *«Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը: Ով բնակւում է իմ մէջ, եւ ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս»* (Յովh. 15:5): Հայոց եկեղեցեին եւս հոգեւոր այս զօրաւոր ծառի մի կարեւոր մաս է, ուր մենք բոլորս հայալեզու ճիւղերն ենք Որթատունկի, ուր պտուղ տալու համար Քրիստոի մէջ պիտի բնակուենք եւ թոյլ տանք, որ Քրիստոս եւս մեր մէջ բնակուի: Զատկական պարզ ողջոյնի Աւետիսով անգամ մենք շարունակութիւն ենք տալիս այս ընթացքին՝ առիթ ստեղծելով, որ Քրիստոս յայտնուի եւ բնակուի այլ մարդկանց մէջ:  Ուրեմն, կարեւոր է նախ յստակ  սահմանելը.

- Արդեօ՞ք Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու մաս ենք ոչ միայն մկրտութեամբ, այլեւ մեր մշտական այցելութեամբ եւ ներկայութեամբ
- Մենք առաքեալների պէս սրտով ու մտքով հաւատո՞ւմ ենք Քրիստոսի՝ կենդանի Աստծոյ Որդի լինելուն, հաւատո՞ւմ ենք Քրիստոսի յարութեանը եւ Իր երկրորդ գալուստին բոլոր ննջեցեալների յարութեանը
- Մեր ապրած կեանքին նայենք՝ Քրիստոս մեր մէ՞ջ է եւ մենք Իր մէջ. ինչպիսի՞ն են մեր յարաբերութիւնները Եկեղեցու մեր հաւատակիցների նկատմամբ
- Մեր կեանքը արտացոլո՞ւմ է մեր քրիստոնէական  հաւատքը, որի շարունակութիւնն է Յարութեան ողջոյնը..

**Քրիստոս Յարեաւ ի մեռելոց**.

Աստուած մեզ էլ արժանացնի կեանքի Յարութեան:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն. ամէն:

**Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

**DAILY BIBLE READINGS FOR 2026** **According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

| | |
|---|---|
| 20 April | 1) Luke 7:1-10; 2) Acts 9:32-43; 1 Peter 2:11-17; John 3:13-21; 3) Matthew 9:9-17; 4) Mark 3:13-19 |
| 21 April | 1) Luke 7:11-35; 2) Acts 10:1-23; 1 Peter 2:18-25; John 3:22-36; 3) Matthew 9:18-26; 4) Mark 3:20-30 |
| 22 April | 1) Luke 7:36-50; 2) Acts 10:24-48; 1 Peter 3:1-9; John 4:1-23; 3) Matthew 9:27-34; 4) Mark 3:31-35 |
| 23 April | 1) Luke 8:1-21; 2) Acts 11:1-26; 1 Peter 3:10-22; John 4:24-42; 3) Matthew 9:35-10:15; 4) Mark 4:1-9 |
| 24 April | Commemoration of the Holy Martyrs of 1915<br>1) Luke 8:22-56; 2) Acts 11:27-12:24; 1 Peter 4:1-11; John 4:43-54; 3) Matthew 10:16-42; 4) Mark 4:10-20 |
| 25 April | 1) Luke 9:1-17; 2) Acts 12:25-13:15; 1 Peter 4:12-19; John 5:1-18; 3) Matthew 11:1-24; 4) Mark 4:21-25 |

## Quote from the Bible

Յիսուս ըսաւ անոր. «“Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ միտքովդ”: Ա՛յս է առաջին ու մեծ պատուիրանը: Եւ երկրորդը՝ ասոր նման. “Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝՝ պէս”: Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ Օրէնքն ու Մարգարէները»: Մատթէոս 22:37-40

Jesus declared, “ ‘Love the Lord your God with all your heart and with all your soul and with all your mind. ’*e* This is the first and greatest commandment. And the second is like it: ‘Love your neighbour as yourself. ’*f* All the Law and the Prophets hang on these two commandments.” Matthew 22:37-40

## PRAYER

Աստուած մշտնջենաւոր, Աստուած յաւիտենական, որ վարի աշխարհին (երկրի) վրայ իբրեւ լոյս ծագեցար եւ լուսաւորեցիր մեզ մեր խաւարային մեղքերէն: Ով անչափդ Աստուած, որ մեզի համար չափի մէջ մտար եւ Սուրբ Հոգիիդ շնորհները հեղելով՝ տարածեցիր արարածներուդ վրայ: Այժմ եւ յաւիտենապէս բարեբանուած ես, ով Ամենամեծդ Աստուած՝ Հօր եւ Ամենասուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

*****

O God everlasting, O God eternal, Who has shone forth as light upon this lower world and has enlightened us in our dark sins; O God infinite, Who did come into finitude for our sake and did pour down and spread the gifts of the Holy Spirit over Your creatures, You are praised now and for the ages of all times, O Almighty God, together with the Father and all-holy Spirit, now and always and unto the ages of ages. Amen



# 24 APRIL 1915:

# DEPORTATION OF ARMENIAN INTELLECTUALS



**24 April 1915 is a symbolic date for commemorating the victims of the Ottoman Empire's near total destruction of its Armenian population.**

This day saw the arrest of 235 leading members of Istanbul's Armenian community – amongst them poets, doctors, religious leaders and political dissidents representing some of the most prominent Armenian intellectuals in the Ottoman Empire. Many of the 235 would be tortured and publicly executed in the months following their arrest.

**On this day, the Armenian genocide began.**

Armenians within the Ottoman Empire already occupied a precarious position when the First World War broke out in 1914. Major pogroms during 1894-96, and again in 1909, had seen thousands massacred. After a number of military setbacks in the First World War, Ottoman leaders undertook measures to deport Armenian populations from their homes despite the vast majority not being located in areas of military activity.

The Armenians were deported along a number of routes to desert areas that could not sustain them. When the Armenian community of Van, a town in the southeast of Turkey, resisted attacks against them on 20 April 1915, Ottoman leaders decided to make deportations an empire-wide policy. The Armenians forced to undertake these death marches were deprived of food and water. Rapes and murders were routinely committed against those deported.

Ordinary Armenians were turned out of their homes and sent on death marches through the Mesopotamian desert without food or water. Frequently, the marchers were stripped naked and forced to walk under the scorching sun until they dropped dead.

At the same time, it is said that the Young Turks created a "Special Organisation," which in turn organised "killing squads" or "butcher battalions" to carry out, as one officer put it, "the liquidation of the Christian elements." These killing squads were often made up of murderers and other ex-convicts. They drowned people in rivers, threw them off cliffs, crucified them and burned them alive.
The cleansing continued during and after World War I. It is estimated about 1.5 million Armenians, 900,000 Greeks, and up to 400,000 Christian Assyrians, were killed due to the genocide.

Records show that during this "Turkification" campaign government squads also kidnapped children, converted them to Islam and gave them to Turkish families. In some places, they raped women and forced them to join Turkish "harems" or serve as slaves. Muslim families moved into the homes of deported Armenians and seized their property.

On August 30, 1922, Armenians who were living in Smyrna were victims of more Turkish atrocities. The "Smyrna Disaster" of 1922 also killed Greeks who were living in the seaside city and involved thousands of Armenians. Turkish soldiers and civilians set all Greek and Armenian neighbourhoods on fire, forcing the fleeing of Greeks and Armenians to the harbour, where thousands were killed.

# ARMENIAN GENOCIDE COMEMORATION EVENING

111 years of remembrance & a legacy still continuing

## ST YEGHICHE ARMENIAN CHURCH
## SUNDAY 26TH APRIL
## 7:30PM

Join us for a compelling talk
by guest speaker Tatevik Hayrapetyan on

## “FAKING PEACE AND MAKING CLAIMS: THE DANGEROUS NARRATIVE OF WESTERN AZERBAIJAN”

Followed by classical musical interludes

111TH

The Armenian Genocide 1915-1923

ARMENIAN COMMUNITY COUNCIL
WWW.ACCUK.ORG.UK
SERVE SUPPORT UNITE

## 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mr and Mrs Hasmik Toomasian and Family for the soul of their Mother the late **AGHADIR (JANET) TARASSIANS** on the 4th anniversary memorial of her passing, also for all the old and new deceased members of the **TARASSIAN** and **TOOMASIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

## General

***St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs***

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

**Hokehankist Requests:** To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

**In Liu of Flowers**: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

**Donations** for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

sumup Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

**Membership:** St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk